

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՖԻԶԻԿԱՅԻՑ

ԹԵՄԱ՝ Քաղցրահամ ջրամբարներում լողալու վտանգների բացահայտումը
և անվտանգության հանրայնացումը աշակերտների ու համայնքի բնակիչների
շրջանում

ԱՌԱՐԿԱ՝ Ֆիզիկա 7-րդ դասարան

ՀԵՂԻՆԱԿ՝ Արմեն Մուրենի Հարությունյան

ՄԱՐԶ՝

ՀՀ Վայոց ձորի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Աղավնաձորի միջնակարգ դպրոց

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Հայեցակարգ

- Մույն աշխատանքով ներկայացնում եմ թե ինչպես սովորողների՝ ֆիզիկայից ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների միջոցով ձևավորել արժեհամակարգ և կարողունակություն, առօրյա խնդիրների լուծման ընթացքում կարողանալ կիրառել ինքնավերահսկման, երևույթի ճիշտ ընկալման, շրջապատում անվտանգային միջավայր ստեղծելուն, փորձն ու հմտությունները շրջապատին փոխանցելու ունակության ձևավորում
- Նախագծային աշխատանքը իրականացվում է համագործակցային ուսուցման միջոցով, կիրառելով մի շարք նոր մանկավարժական մեթոդներ ու տեխնոլոգիաներ, ինչպիսիք են մտքերի տարափը, հասկացությունների քարտեզագրումը, աշխատանքը փոքր խմբերով, դասախոսությունը, սվյալ ֆիզիկական երևույթի դիտման նպատակով էքսկուրսիայի կազմակերպումը, ուսումնական ֆիլմերի դիտումը համացանցից և երևույթի փորձական հիմնավորումը լաբորատոր փորձերի օգնությամբ:
- Նախագծային աշխատանքը պետք է իրականացնել աշակերտակենտրոն եղանակով, այդնպատակով մասնակիցների համար վերջնարդյունքը պետք է լինի պարզ, հասկանալի, կիրառելի:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Գրական ակնարկ

Ֆիզիկայից ստացած գիտելիքների, կարողությունների և կարողունակության շնորհիվ

ձևավորվում է աշակերտի արժեքային համակարգը:

Արժեհամակարգով օժտված աշակերտը, դառնալով որոշակի ռեսուրսների կրող, համայնքում և սովորողների շրջանում այն ծառայեցնում է անվտանգային, ինքնավերահսկման, աշխատանքներն ավելի դյուրին դարձնելուն, ֆիզիկական երևույթները գիտականորեն և մատչելի ձևով շրջապատող մարդկանց ներկայացնելուն:

Ջրամբարը, որը գտնվում է Աղավնաձորի տարածքում, ունի 1.5մլն խ.մ ծավալ, տարածքը չիվերահսկվում, դպրոցական արձակուրդների ժամանակ աշակերտները հաճախակի մեկնում են

ձկնորսության` դուրս մնալով ձնողների հսկողությունից: Ջրամբարում ջուրը կուտակվում էձնհալից ու անձրևներից: Լինելով բարձր գոտում` ջրի ջերմաստիճանը շատ ցածր է լինում, լողալըջրում` խիստ վտանգավոր:

Տարիներ առաջ այն դարձել է դժբախտ պատահարի վայր, դպրոցի աշակերտներից մեկը ջրասույզ

է եղել լողալու փորձ արած դասընկերներին փրկելու ժամանակ: Անհրաժեշտություն է առաջացել

աշակերտների ու համայնքի բնակիչների շրջանում կատարել իրազեկման աշխատանքներ` ջրամբարում լողալու վտանգավորության մասին: Վերջնարդյունքում հրատարակել իրազեկման

թրուցիկներ ու տարածել, ջրամբարի տարածքում տեղադրել „ԼՃՈՒՄ ԼՈՂԱԼԸ ԽՍՏԻՎ

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է,, թիթեղյա պաստառներ` :

Խնդիրը պարզաբանելու համար նպատակահարմար էր համագործակցային ուսուցման

կիրառումը, նրա մեթոդների ու հնարների միջոցով բոլորին հասկանալի դարձնել մարմնի լողալուպայմանները: Համախմբվելով` 7-րդ դասարանցիները որոշեցին

խնդիրը լուծել նախագծային աշխատանքի միջոցով, մասնակից դարձնելով ծնողներին ու թեմային առնչվող այլ առարկաների ուսուցիչներին:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈԻԼԵՐԸ

1. Աշխատանքային խմբերի ձևավորում ` 4 խումբ:
2. Համացանցից ֆիլմերի դիտում ``<<Մեռյալ ծով>>, <<Երևանի աղի լճեր>> -բոլոր խմբերը:
3. Հեղուկի մեջ ընկղմված մարմնի վրա դուրս հրող ուժի առաջացման փորձի կատարումը

լոբորորատորիայում - ֆրոնտալ դիտում:

4. Մարմնի լողալու պայմանների դիտում -ֆրոնտալ դիտում:
5. Հեղուկի խտության որոշումը - ֆրոնտալ դիտում:
6. Արքիմեդի օրենքի փորձնական ցուցադրում-ֆրոնտալ ցուցադրում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԽՄԲԵՐԻ ՄԻՋԵՎ

1. 3 - 6 ֆրոնտալ ցուցադրումների վերլուծությունը հանձնարարել 1-4 խմբերին, որպես ինքնուրույն աշխատանք:
2. Նախագծային աշխատանքին մասնակից դարձնելով ծնողներին ,նրանց հետքննարկել <<ՊԱՆԻ ԱՂԱԶՈՒՐ ՍԱՐՔԵԼԸ>> տնային պայմաններում -բոլոր խմբերին:
3. Քննարկում համացանցում դիտված ֆիլմերի մասին, կիրառելով <<Ձնագնդի>> մեթոդը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԲԱՆԱ ՋՐԱՄԲԱՐ

1. Խմբերը ծնողների ուղեկցությամբ այցելում են ջրամբար:
2. Աշխարհագրության ուսուցիչը տեղում բանավոր դասախոսության միջոցով ներկայացնում է տարածքին բնորոշ առանձնահատկությունները:

3. Կենսաբանության ուսուցիչը ներկայացնում է դասախոսություն<<Մարդու մկանային համակարգի նորմալ աշխատանքի կախումը

արտաքին ջերմասիճանից>> թեմայով:

4. Ֆիզիկայի ուսուցչի ուղեկցությամբ խմբերը չափում են ջրամբարի, նրա մեջ լցվող 3 աղբյուրների ջրերի խտությունները:

5. Բոլոր խմբերը, ծնողների ուղեկցությամբ, ջրամբարի շրջակայքում կատարում են մաքրման աշխատանքներ:

6. Նախապես ընտրված ծնողները կատարում են նկարահանման աշխատանքներ:

7. Կազմակերպված խարյուկի շուրջ ֆիզիկայի ուսուցիչը հարցուպատասխանի միջոցով կազմակերպում է քննարկում խմբերի հետ

` շեշտադրելով ջրամբարում լողալու վտանգները:

9. Վերադարձ դեպի գյուղ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Փորձերից հետո խմբերին հնարավորություն է տրվում ամփոփել կատարված աշխատանքը, վերլուծում են արդյունքները, ուսուցչի աջակցությամբ կատարում են եզրահանգում:

Աբանա լճում լողալը խստիվ արգելվում է

Լճի ջուրը քաղցրահամ է, որն առաջանում է անձրևաջրերից և ձնհալից, այդպիսի ջրերում Արքիմեդյան ուժը փոքր է:

Լճի ջուրը սառն է , անխուսափելի է մկանների հոգնածությունը:

Լճում բավարար չեն մարմնի լողալու պայմանները:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Խմբերը կատարում են կատարված աշխատանքների գնահատում և
ինքնագնահատում:

Հովանավորների հայտնաբերում:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

1. Թրուցիկների /բուկլետների/ և պաստառի պատրաստման աշխատանքներ:

2. Շնորհանդեսի կազմակերպում:

3. Թրուցիկների տարածում և թիթեղյա պաստառի տեղադրում :

Նախագծային աշխատանքի տևողությունը 2 ամիս

Ֆիզիկայի ուսուցիչ՝ Արմեն Սուրենի Հարությունյան

12.01.2024թ